

Վ. Մ. ԱՎԱԳՅԱՆ

ԲԺԻՇԱ ԱՌՈՒՍՏԱՄՊՈՎԻ (ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ) ՀԱՅՈՅԻՆԵՐԸ
ԶԿԱՆ ԹՈՒՅՆԻ ՄԱՍԻՆ

Խիստ բազմակողմանի և արգասավոր է եղել բժիշկ Մարգար Հովհաննեսի Առուստամպովի (Առուստամյանի) դործունեությունը։ Ճարական Ռուսաստանի պայմաններում նա չէր կարող աշխատել այնտեղ, որտեղ ուղում էր և ուր կոչված էր աշխատելու Անկախի իր ցանկությունից ու կամքից, 1889-ին նա նշանակվում է բժշշկական տեսուչ Աստրախանում, որտեղ, ինչպես հայտնի է, կային խոշոր ձկնորսարաններ, որոնք գտնվում էին ճասնավոր ձկնարդյունաբերողների ձեռքին, Վերջիններս, որպես իսկական կապիտալիստներ, զահագրգոված էին ըստ հնարավորին մեծ շահույթ կորդեկու իրենց ձեռնարկություններից և շատ քիչ էին հոգում կամ բնավ չէին հոգում իրենց բանվորների կյանքի պայմանների բարեկարգման, նրանց աշխատանքի ու կենցաղի պատշաճ դրվագքի, նրանց բնակարանային պայմանների, սննդի, հագուստի մասին։ Այդ ամենը հասցնում էր բանվորների հյուծմանը, նրանց մեջ ստամոքսա-աղիքային և ումատիզմ հիվանդությունների, ինչպես նաև այնպիսի հիվանդությունների առաջացմանը, որոնց ախտածնության (պաթոպենեզի) մեջ քիչ գեր չի կատարում մրսեցման ֆակտորը։ Ձեռնարկատերերը լրիվ չէին կատարում նաև որսած ձուկը մթերներ, տեղափոխելու և պահելու համար անհրաժեշտ սանհիտարական-առողջապահական պահանջները։ Այդ ամենն իշեցնում էր ձկան որակը և վիշացման առիթ դառնում։ Շովկայում այդպիսի մթերքի իրացումը գնորդների մեջ առաջ էր բերում ու սակավ հիվանդություններ։

Աշխատանքի այսպիսի պայմաններում բժ. Առուստամպովը հանդիս է դալիս իրեւ մեծ մարդասեր-բժիշկ, իրեւ ժողովրդական առողջապահության գործույթ շինարար։ Որպես ականավոր

պրակտիկ բժիշկ, անսպառ եռանդով ու ոգևորությամբ լցված, նա լայն բժշկական ու հասարակական գործունեություն է ծավալում: Առողջապահովը աշխատավորության իսկական բարեկամն էր: Արհամարհնելով իր առօրյա հոգսերը՝ աշխատավորության կյանքի և առողջության համար մղած պայքարում նա ունենում է բազմաթիվ հոգումներ ու ապրումներ, բայց մեծ հիգով ու համառությամբ ձգտում է հասնել իր նպատակին: Խսկապես իր անկաշառ աշխատանքով նա մեծ հեղինակություն է վաստակում և, ըստ արժանվույն, վայելում Աստրախանի աշխատավորության, բժիշկների ու այլ առաջավոր մարդկանց համակրանքի:

Առողջապահովի բժշկական, հասարակական և գիտական գործունեությունն օրգանապես կապված էր նրա ամենօրյա պրակտիկ աշխատանքի հետ: Նրա գործունեությունն արտացոլում էր այն միշտավայրի կենսական խնդիրները, որտեղ նա աշխատում էր: Նվիրելով դրան իր ժամանակի մեծ ժամանակը, նա չէր սահմանափակվում միայն այդքանով: Աստրախանի արդյունաբերական ձեռնարկություններում՝ իր աշխատանքի առաջին իսկ տարում նա գտել էր մարդկանց ձկնաթունավորման մի շարք գեպեր, որոնցից հինգը ունեցել են մահացու հետևանք:

Ականավոր բժիշկը կարողանում է ամենօրյա աշխատանքից կորզել այն ամենը, ինչ որ կարող էր օգտակար լինել մարդկությանը: Այն ժամանակված ժանր պայմանները չկարողացան խանգարել նրան՝ զբաղվելու գիտական աշխատանքներով: Իբրև խորամիտ բժիշկ, նա զանասիրությամբ դիտում և ուսումնասիրում է ձկնով թունավորվածների կլինիկական պատկերը: Շնորհիվ հաջող հավաքած անամնեստիկ տվյալների՝ նա սահմանում է, որ թունավորման բոլոր դեպքերը հետևանք են աղած ձկան անեփի (հում) օգտագործման: Այնուհետև նա հանդես է բերում մեծ ստեղծագործական և գիտական ինքնագործունեություն: Նախ և առաջ նա ժիտում է փտման որևէ հատկանիշի առկայությունը վերոբիշյալ թունավորումների պատճառ հանդիսացող ձկների մեջ: Ֆիզիկական հատկություններով լավորակ ձկների օգտագործման հետևանքով առաջացած թունավորումների վերոբիշյալ հինգ դեպքի կլինիկական պատկերը համեմատելով իր կողմից հաճախ դիտված փտման ակնհայտ նշաններ ցուցաբերող ձկների օգտագործումից առաջացած թունավորումների կլինիկական պատկերների հետ, Առողջապահովը նշում է մեծ տարբերություն ինչպես հիվանդության ընթացքի, այնպես էլ ինկուբացիայի տևողության

ու հիվանդության ելքի միջև։ Այստեղից էլ միանգամայն ինքնուրույն եղանակով նա հանգում է Յունավորման 2 տարրեր խմբերի լիթոլոգիական պատճառների անհամատելի խության և Յունավորման հիշալ հինգ դեպքի տոքսիկա-ինֆեկցիոն բնույթի հնարավորության։ Էր ժամանակի համար այդ գաղափարը նոր էր և ինքնատիպ, քանի որ մինչև այդ համարյա բոլոր հեղինակները այդպիսի ձկնաթունավորումները մի խմբի մեջ են գնում՝ ենթադրելով, որ նրանց զարգացման պատճառներն են պտոմայինի առկայությունը փշացած ձկան մեջ, ձկնորսության համար կիրառված տարրեր թույները, թույնի արտադրանքը ձկան օրգանիզմում ձկնկիթ գնելու շրջանում, կոնսերվացիոն նյութերը և այլն։ Այդ բոլոր թունավորումների կլինիկական պատկերը տարրեր հեղինակներ միատեսակ էին նկարագրում։ Անհրաժշտ էր ունենալ մեծ գիտություն, փիզիախորհրդական և ինքնուրույնություն՝ այդ հեղինակավոր հետազոտողների հայացքները վերաբննության ենթարկելու համար։

Հնարավոր համարելով ձկան թույնի գոյությունը, բժ. Առուտամովը, առանց կողմնակի օգնության և զեկավարության, 90-ական թվականների Աստրախանի ընձեռած հնարավորությունների պայմաններում սկսում է մանրակրկիտ և դժվարին հետազոտական աշխատանք կատարել՝ ձկան թույնի բնույթունը սահմանելու համար։ Թունավորման պատճառ հանդիսացող ձկների ֆիզիկական հատկանիշների սահմանումից բացի՝ նա կատարում է նրանց միկրոսկոպիկ հետազոտությունը, գտնում նրանց տարրեր մասերում իրեն անհայտ բազմաթիվ միկրոբներ, կատարում թերթավոր բուծում ագար-ագարի մրա, որ պատրաստված էր լինում մսի և ձկան բույսոնից։ Երկար ժամանակ ուսումնասիրում է ստացած միկրոբների հատկությունները, կատարում է թունավորումից մեռած դիակների պարենիմատոզային օրգանների միկրոսկոպիկ և բակտերիոլոգիական հետազոտություն և հանգում է այն եղանակացության, որ իր կողմից զիտված թունավորումները առաջացել են չորս կարգի միկրոբներից, որոնցից մեկը առաջացել է սաղմոնից (լօսօս), մյուսը տարազանից (սևրիոգա), երրորդը մորեից (օսետր) թունավորված օրգաններից, չորրորդը թառափի (բելուց) թունավորումից մեռած օրգաններից։

Զբավարարվելով կատարած հետազոտությամբ՝ Առուտամովը շարունակում է իր փորձերը կենդանիների վրա, այն է՝ բազմացնում է այն միկրոբները, որ առաջանում են թունավորու-

ձկներից ու թունավորումից մեռած օրգաններից, ներարկում է շներին, կատուներին ու ճագարներին. դիտում է կենդանիների մեջ առաջացած պատկերը, հետազոտում թունավորումից մեռածների միկրոբների հատկությունները, հաստատում նրանց նույնությունը ձկների մեջ հայտաբերված միկրոբների հետ և միաժամանակ հաստատում երկար ժամանակ եռացած միկրոբների թունավոր լինելու կարևոր փաստը:

Իր կատարած բոլոր հետազոտությունների արդյունքները բժ. Առուատամովը ձեսկերպում է «Զկան թույնի բնությունը» աշխատության մեջ և զեկուցում 1890-ի ապրիլի 18-ին Աստրախանի բժշկական Ընկերությանը, որտեղ և ցուցաբերում է թունավորում տված ձկների կտրվածքները, ինչպես նաև ձկների և մարդկային ու կենդանական օրգանների միկրոբների բուծումը:

Այդ աշխատանքը, նախնական հաղորդագրության ձևով, տպագրվել է նույն խորագրով՝ «Վրաց» ժուռնալի 1891 թվի № 18-ում:

Սակայն բժ. Առուատամովը չի սահմանափակվում այդ աշխատությամբ։ Համոզված լինելով իր հնթագրության՝ ձկան թույնի բակտերիալ բնույթի ճշմարտության մեջ, նա իր հետազա ամբողջ կյանքի ընթացքում, այսինքն՝ դարձյալ 10 տարի շարունակ հավաքում է այդ ժամանակաշրջանում Աստրախանում տեղի ունեցած ձկնաթունավորանների բոլոր դեպքերի մասին տեղեկություններ և կատարում լայն գիտա-հետազոտական աշխատանք՝ նրանց պաթոգենետիկ պատճառները, ինչպես նաև ձկնաթունավորման պատկերը բացահայտելու և ճշգրտելու համար։ Իր կողմից գիտված թունավորումների բոլոր դեպքերից նա առանձնացնում է 100 դեպք, որոնք, իր կարծիքով, պետք է անպայման առաջացած լինեին բակտերիալ ֆլորայից։ Թունավորման այդ բոլոր դեպքերի մանրակրկիտ ուսումնասիրման արդյունքն է հանդիսանում նրա շեղան թույնի բնության մասին» մենագրական աշխատությունը, որը մեծ արժեք է ներկայացնում նաև այժմ։

Այդ աշխատության մեջ Առուատամովի վկայակոչած աղբյուրների տեսությունից պարզվում է, նախ և առաջ այն, որ նա մանրամասն ծանոթ է հարցին վերաբերող ուսումնական և արտասահմանյան ամբողջ գրականությանը 1845 թ. սկսած մինչև 1901 թ.։

Այդպիսի մանրամասն, գեղեցիկ շարադրված աղբյուրագիտական տեսություն, որ արտակարգ լրիվությամբ լուսաբաներ ձկնաթունավորման ուսումնասիրության զարդացման պատմությունը,

մինչև բժ. Առուստամովը ոչ ոք չէր կատարել թուսածառաւ։ Եաւ Հեղինակավոր հետազոտողներ, ինչպես՝ ակադ. Օվսյաննի-կովը, պրոֆեսորներ Զգելկառմբը, Սկլորցովը, Անրեպը, Բրիգերը, բժիշկ Օլդեկոպը և ուրիշներ, հիմնականում աշխատելով Աստրա-խանում, դիտել էին ձկնաթունավորման ոչ սակավ դեպքեր և դրանք բացատրել պտոմայինների տեսքով հանդես եկող քայլայ-ված սպիտակուցային նյութերի ազգեցությամբ։ Եթե նրանցից ո-ձանք միայն կասկած են հայտնած եղել ձկնաթունավորմանների բոլոր կլինիկական պատկերների նույնության մասին, ապա ձկան թույնի բակտերիալ բնույթի հարցը ոչ ոք Առուստամովից առաջ այդպես պարզ և որոշակի չի դրել։

Կամավոր Տնտեսական Ընկերությունը 1845 թ. ձկան թույնի բնության ուսումնասիրման համար հայտարարում է մրցանակա-րաշխառթյուն։ Ներկայացված աշխատությունները հրատարակվում են այդ ընկերության կողմից, ընդորում պարզվում է, որ Հեղի-նակների մեծամասնությունը թունավորումները վերագրում են նե-խումին, մի քանիսը՝ թույնի առաջացմանը ձկան կենդանության օրով ճնշա հիվանդագին դրությամբ, ուրիշները՝ ձկան մեջ դրսից ներմուծված թույնին, որը հանդես է դաշիս մկնդեղի, ցինկի և կա-պարի ձեռվ։

Կամավոր Տնտեսական Ընկերության խմբագրությունը, հան-րապումարի բերելով ներկայացված աշխատանքները, նշում է. «Ձկան թույնը, նրանց կարծիքով, ամենից հաճախ կամ միշտ գտնվում է ճարպաթթվի մեջ, որը առաջանում է ձկան յուղից, որայց այդ հաստատված չէ փորձով։ «Սակայն, որովհետև ճար-պը ավելի շուտ է փշանում քան միաը, ապա հակառակորդ հեղի-նակների կարծիքով ձկան մեջ էլ մի յուղային մասն է փշանում։ Այդպես կարելի էր ննթադրել միայն այն դեպքում, եթե թունա-վորումը զուգակցվող ձկան մսի քիմիական փոփոխությունը նման լիներ կենդանական մարմինների սովորական նեխումին։ Բայց և այնպես ձկների թունավոր հատկության պատճառը, հավանաբար, տարբեր է կենդանիների նեխման պատճառից, որ ապացուցվում է նեխմանն ուղեկցող մշտական հոտով, և որը շատ հաճախ չի նկատվում վնասակար ձկների մեջ։» Եվ ապա. «Քիմիական քայ-լայման վերոհիշյալ օրինակներից թե՛պես և տեղեկանում ենք արմատական (Կ.Օ.Բ.Հ.Կ.Օ.) ձկան մեջ հանքային թույների երթեմնա-կի առկայության մասին, բայց այնքան սակավ չափով, որ ոչ մի կերպ չի կարելի նրանց վերագրել թունավորման պատճառները,

այլ ամենայն հավանականությամբ, դրանք, ինչպես նաև երշիկի թույնի հարուցիչները, պետք է որոնել քիմիական որևէ վնասակար արտադրանքի մեջ, որ առաջանում է աղալուծույթում գտնվող ձկան դանդաղ քայլայումից»:

Բերված քաղվածքներից պարզվում է, որ բոլոր հեղինակները, ինչպես և Հենց խմբագրությունը, վերջին հաշվով ձկան թույնի բնույթը բացատրում են ձկան «քայլայմամբ», նրա մեջ տեղի ունեցած նեխման պրոցեսներով։ Հեղինակներից միայն մեկը, բժ. Բերկովսկին, որ անձամբ դիտել էր ձկնաթունավորումների գեպագեր, և առավել ճշգրտությամբ նկարագրել դրանց կլինիկական պատկերը, կատարելով փուման տարրեր ստադիաներում գտնվող ձկներով կենդանիներին կերակրելու փորձեր, ուզդակի գեմ է արտահայտվում փուման պրոցեսների և ձկան թույնի առնչությանը և ընդգծում է բացառապես հում և աղած ձկան օգտագործումից առաջացած թունավորումների շատ անգամ դիտված փաստը։ Այնուամենայնիվ նա էլ, ուրիշների նման, ձկնաթունավորման բնույթի վերջնական բացատրություն շի տալիս։

Վերոհիշյալ առաջին աշխատությունից հետո բժ. Առուստամովը անց է կացնում զայն գիտա-հետազոտական աշխատանք՝ ձբկ-նաթունավորման միկրոբի հայտաբերման և ուսումնասիրման նպատակով։ Մանրակրկիտ օգտագործելով ժամանակակից բակտերիոլոգիական տեխնիկան, նա բազմաթիվ աշխատանքներ է կատարում թունավորման պատճառ հանդիսացող ձկներից, ձկնաթունավորմամբ մեռած մարդկանց դիակներից հարկավոր միկրոբը գտնելու համար։ Կատարում է մերժանում, բուծում, առանձնացնում է այդ միկրոբներից արտադրված տոկսինը և կատարում կենդանիների վրա միանդամայն հաջող փորձնական աշխատանքներ։

Իր դիտողությունների հիման վրա Առուստամովը դալիս է այն եղրակացության, որ թունավորում են տալիս մորեն (օսեր), սպիտակաձուկը (բելօրենիցա) և սաղմոնը (լոսօս)։

1888-ի մայիսին նա Պետրովուրդ է գնում, հետը տանելով իր առանձնացրած միկրոբի բուծումները, և շարունակում է իր փորձերը պրոֆ. Աֆանասևի լաբորատորիայում։ Այնուհետև նա մեկնում է Փարիզ՝ Պաստյորյան ինստիտուտը, Մեծնիկովի մոտ, հետը վերցնելով իր առանձնացրած միկրոբի մշակույթներն ու պրեպարատները։ Այստեղ նա կենդանիների վրա ևս մի շարք փորձեր է դնում։ Վերադառնալով Փարիզից՝ նա իր ձեռք բերած

տվյալները ներկայացնում է Հողագիտության և Պետական Գույքերի Մինիստրությանն առընթեր գործող Հատուկ Հանձնաժողովին։ Վերջինս մի ձեռնահամար է Հեղինակավոր Հանձնաժողով էր, նրա կազմի մեջ մտնում էին՝ Ս. Ս. Բոտկինը, Ն. Յա. Չիստովիչը, Ս. Ն. Վինոգրադսկին, բժշկագիտության դոկտոր Ա. Ա. Վլադիմիրովը, պրիվատ-դոցենտ Ֆ. Գ. Գեյլերը, բժշկագիտության դոկտոր Ա. Ե. Ֆեոկտիստովը։

Հանձնաժողովը հրավիրում է չորս նիստ, ուշադրությամբ քննում Առուստամովի փորձերի բոլոր տվյալները, նրա պրեպարատները, ցուցադրումները, սակայն իր որոշումներում մեծ զգուշություն է ցուցաբերում՝ տալով հետևյալ եզրակացությունը. «Քննելով իրեն ներկայացրած տվյալները, Հանձնաժողովը հիմք շի գտնում մխտելու այն հնարավորությունը, որ ձենարդյունաբերության մի քանի դեպքեր կարող են կախում ունենալ կենդանության օրով միկրոբով վարակված ձկան օգտագործումից, մի միկրոր, որ նշված է բժ. Առուստամովի կողմից։ Սակայն դրան առընթեր Հանձնաժողովը վաղաժամ է գտնում այդ հարցի կապակցությամբ որևէ վերջնական եղբակացության հանդելը։ Եթե հետագա ուսումնասիրությունները հաստատեն բժ. Առուստամովի ենթագրությունը ձկան թույնի մի քանի տեսակների բակտերիալ բնույթի մասին և եթե պարզվի, որ համապատասխան հիվանդությունների պատճառը հանդիսանում են այն միկրոբները, որոնք պայմանավորում են ձկների վարակիչ հիվանդությունները, այդ դեպքում Հանձնաժողովը արդարացի կդտնի բժ. Առուստամովի երախտիքը համարել այն, ինչ նա հաստատակամորեն պնդում է վերոհիշյալ կապի առկայության մասին»։

Բոտուկիզմի հարուցիչը հայտաբերվեց 1895-ին (այսինքն՝ Առուստամովի աշխատառությունից ավելի ուշ), Բելգիայում, Վան երմենհեմի կողմից։ Այդ անակերպ բացիլը նրա կողմից կողմից Վաս. Յուտինուս. Այժմ տարբերում են այդ բացիլի հինգ անշատ տիպեր A, B, C, D և F իր առաջին գործում արդեն բժ. Առուստամովը արտահայտել էր այն միտքը, որ գոյսվածուն ունեն ձենարդունավորման չորս տիպի բացիլներ, թեև իր վերջին աշխատության մեջ նա կասկածում էր իր նախնական մտքի ճշմարտության վրա։ Եթե անդամ կարելի է կասկած հարուցել Առուստամովի նկարագրած դիպլոբացիլի և բոտուկինյան ցուպիկի նույնության մասին, ապա անկասկած է, որ բժ. Առուստամովն իր փորձերի ընթացքում բազմիցս գործ է ունեցել հենց բոտուկիզմի հարուցիչի

հետ՝ ուրիշ միկրոբների հետ խառը վիճակում։ Առանձնապես ծանրակշիռ այդ տեսակետը ապացուցվում է կենդանիների վրա նրա կատարած փորձերով։

Այժմ հայտնի է, որ բոտովիզմի ցուպիկի տոքսինն իր ուժով չել գիշում ոչ մի հայտնի թույնի։ Տոքսինը առանձնապես շատ է հավաքվում 8—12 օրյա կուլտուրաների մեջ, Բժ. Առուստամովը կենդանիներին կերպարում էր 5—12 օրյա կուլտուրայի աննշան դոզաներով և ստանում մարդկանց թունավորման անալոգիական պատկեր՝ հիմնականում ներվային համակարգության վնասման գծով։ Կենդանիների թունավորմանը հետևում էր արագ մահացում՝ ուժեղ շնչահեղձության զուգակցությամբ։ Նվազ հետաքրքրական չել լինի մեշրերել կենդանիների հիվանդության պատկերը Առուստամովի բառացի շարադրմամբ։ «Կենդանիների հիվանդությունների ամենաակնառու նշանները; Հար և նման նույն այդ հիվանդությունների գրսնորմանը մարդկանց մոտ, հետևյալներն են. մարմնի ցածր ջերմաստիճան, շնչարգելություն, ընդհանուր թուլություն և սրտի գործունեության նվազում, միզափամփուշտի պարետիկ դրություն, «այնուհետև աշքերի լորձաթաղանթի և նրանց պարունակության բավականին նկատելի չորություն, լեղապարկի հաճախակի գերլեցունություն, բջջանցուավածքային օրգանների և հատկապես երիկամների ուռչում և լճացած գերարյունություն։ Այդպիսնել կենդանիների և մարդկանց թունավորման ամենագլխավոր երեւութները շափազանց նման են իրար»։

Այդ նկարագրության մեջ գոկտոր Առուստամովը տալիս է կենդանիների հիվանդության այն կլասիկ պատկերը, որը ստացվում է բոտովինյան ցուպիկի տոքսինից։

Վերջապես ձկան թույնի բակտերիալ բնույթի մասին Առուստամովի շարադրած հայացքի ճշմարտացիության տպացուցն է ձկնաթունավորման նրա հիանալի նկարագրած կլինիկական պատկերը, որի հաստատման համար իր դիտութ 10% գետքից նա բերում է 15-ի հիվանդության պատմությունը։

Բժ. Առուստամովը միանգամայն ճիշտ և որոշակի սահմանագատում է նեխած ձկից թունավորվելու պատկերն այն թունավորումներից, որոնք առաջացել են իր կողմից առանձնացրած միկրոբներից, այսինքն՝ բոտովիզմի դեպքերից։ Այդ շրջանում նույնիսկ շատ հեղինակավոր բժիշկներ չեին հասկանում այդ տարբերությունը։

Առուստամովի կարծիքով նեխած ձկից առաջացած թունավորամների գեպքում նախ և առաջ երեան են դալիս մարսողական օրդանների խանգարման երկույթները, այն է՝ սրտախառնությունը, փսխում, լուծ, փորացալ, փորափքանք (մետեօրիզմ) բարձր շերմաստիճան, բրտինք և այլն, որոնք հանդես են գալիս նեխած ձկան օգտագործումից 2—3 ժամ հետո, շարունակվում են երկար ժամանակ և հետեանքը մեծ մասամբ լինում է ապաքինում:

Նեխած ձկան օգտագործումից առաջացած ձկնաթունավորումները կարող են առաջ գալ ձկան յուրաքանչյուր տեսակի օգտագործումից: Բակտերիալ բնույթի ձկնաթունավորումները հարուցվում են կարմրածկան, սպիտակածկան և թափառածկան օգտագործումից, ընդ որում միանգամայն թարմ և լավորակ վիճակում:

Թունավորման երկույթն ի հայտ է գալիս ինկուբացիոն շրջանը վերջանալուց ձկան օգտագործումից 12—24 ժամ հետո: Թունավորման կլինիկական պատկերը պայմանավորվում է կենտրոնական ներվային համակարգության վնասումով:

Թունավորման ամբողջ կլինիկական սիմպտոմային կոմպլեքսը բժ. Առուստամովի կողմից տրված է այնքան ամբողջական ու ճշգրտացի, որ պրոֆ. Գլուսովայի միանգամայն ճիշտ կարծիքով, նրանով կարելի է այժմ, նրա նկարագրածից 60 տարի անց, ուսումնասիրել բոտովիզմի պատկերը Ահավասիկ այդ պատկերի համառոտ նկարագիրը.

Թունավոր ձկան օգտագործումից 12 ժամ անց, առանց որևէ նախնական երկույթի, սկսվում է զլիապտույտ, տեսողության մթագնում և թուզություն: Առարկաները սկսում են կորցնել իրենց ցցոնությունը, դառնում են ավելի հարթ, երբեմն կապտավին, հանդես է գալիս դիպլոպիա, բիբերը լայնանում են. նկատվում է բոլոր լորձաթաղանթների բացարձակ շորություն, ինչպես նաև շորություն լեզվի, շրթունքների, բերանի և թիթի խոռոշների. կուլ տալլ դժվարանում է, ծախնը խիստ խոպտում, առաջ է գալիս լրիվ ափոնիա, ախտրժակի բացարձակ կորուստ, ծարավություն շիզոացվում, հարյած լորձաթաղանթների շորության: Համառ փորկապություններ, որոնց վրա չի ազդում ոչ մի լուծողական և որոնց երբեմնակի զուգակցում է փսխումը (կենտրոնական ծագում ունեցող), — բժիշկներին առիթ են տաիս ileus ենթադրելու Մեզի նվազում և լիակատար դադարում: Զերմաստիճանը ոչ միայն շիզարձանում, այլև անկում է նկատվում նորմայից ցածր, հաճախ 36° C: Արագորեն վրա է հասնում ուժեղ թուզություն, հիվանդ-

ները չեն կարողանում կանգնել ոտքի վրա. սրտի գործունեությունը թուղարանում է, պուզը մեծ մասամբ արագացած է (80—100 զարկ մեկ րոպեում): Երբեմն փսխում և կողքերում դղացվում է բութ ցավ, այնուհետև՝ շնչարգելություն: Շնչառությունը ընդհատ է և մակերեսային, շնչական օժանդակ մկանների մասնակցությամբ: Վրա է հասնում ցիանոզ: Հիվանդության սովորական տեսողությունն է 3—4 օր: Մահացությունը խիստ բարձր է: Հազվագյուտ դեպքում վրա է հասնում հիվանդի դրության լավացում: Ապաքինումը կատարվում է խիստ դանդաղ, երբեմն նկատվում է բարդացում պարուիտի ձևով:

Բոտուղիգմի այսպիսի կլասիկ նկարագրություն դժվար է գրանել և ժամանակակից մասնագիտական գրականության մեջ:

Այսպիսով, նրա աշխատանքից ավելի քան կես դար հետո, կարող ենք արձանագրել, որ բժ. Առուստամովն իր փորձերի ընթացքում անկասկած զատել է բոտուղինիուսի ցուպիկը, ուրիշ միկրոբների խառնուրդի մեջ: Նրա սխալը միայն այն է, որ նա չի կիրառել անաերոբների մեկուսացման մեթոդը և չի տվել այդ միկրոբների պարզորոշ բնութագրումը: Այդ պատճառով էլ Հողագործության մինիստրության և Պետական գույքերի Հանձնաժողովը, որը հատկապես ստեղծված էր մրցանակարաշխության առաջարկված աշխատությունների բննարկման համար, 1904 թ. փետրվարի 23-ին ընդունում է հետևյալ որոշումը.

«Հեղինակի կողմից զատված միկրոբները գտել են ոչ բավականաշափ պարզորոշ բնութագրում: պահպանված ֆոտոգրամներով և խոնացած պրեպարատներով դժվար է սահմանել նրանց իսկական քնությունը, սակայն հնարավոր է, որ բժ. Առուստամովի ձեռքում իսկապես եղել են նրա կողմից նկատված ձկնաթունավորումների հարուցիչները: Սակայն եթե բժ. Առուստամովի աշխատանքի բակտերիոգիական կողմը ոչ բավականաշափ ճշգրիտ է ներկայացված, այնուամենայնիվ նա մեծ երախտիք ունի այն իմաստով, որ ուսումնասիրել է այն պայմանները, որոնց մեջ կատարվում են ձկնաթունավորումները, հավաքել է կլինիկական բավականին նյութ, հավաստել է մի շարք փաստեր, որոնք հարկադրում են այդ թունավորումները զատել առանձին լիինիկական ձևի մեջ՝ տարրեր այն հիվանդություններից, որոնք պայմանավորվում են ուսելիքի մեջ նեխած ձկների օգտագործումով, վերջապես, նա առաջինն է, որ վճռականապես արտահայտվել է ձկնաթունավորումների վարակիչ բնույթի օգտին, իր այդ հայացքի հաստատման

Համար բերելով ոչ սակավ համոզիլ փաստեր ու կշռադատությունները:

Մրցանակարաշխության առաջադրված և հանձնաժողովի կողմից քննարկված մի շարք աշխատանքներից միայն բժ. Առուստամովի աշխատությունն էր համապատասխանում մրցանակարաշխության խնդիրներին, որի համար և Հանձնաժողովը որոշում է. բժ. Առուստամովի աշխատանքը ընդհանուր գծերով բացահայտում է ձկան թույնի բնությունը, ցույց է տալիս այն պայմանները, որոնց առկայությամբ կատարվում է թունավորումը և տալիս է նրա կլինիկական պատկերը: Զի կարելի չնշել, որ բժ. Առուստամովի այս աշխատությունը արգասիք է շուրջ տասնմեկամյա անխոնց աշխատանքի, որն ընդհատվել է միայն անակնկալ մահով:

Ենկատի առնելով դրկտոր Առուստամովի վերոհիշյալ աշխատության նշանակությունը, Հանձնաժողովը արդարացի է համարում հարգել հանգույցյալ անխոնց մշակի հիշատակը՝ նրա աշխատությունն արժանացնելով փոքր մրցանակի, 1500 ռուբլու շափով:

Այսպիսով, ոչ մի կասկած չի մնում, որ բժ. Առուստամովը Ռուսաստանում առաջիններից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ ճշշտիվ սահմանեց ձկնաթունավորման տոքսիկա-վարակիչ բնությունը:

Մարգար Առուստամովը ոչ միայն հասարակական խոշոր գործիչ էր, ոչ միայն հմայիչ մարդ-բժիշկ. նա օժտված էր նաև որոնող մտքով, լայն մտահորիզոնով, հազվագյուտ աշխատասիրությամբ, որոնց ակնհայտնի վկայությունն է նրա բարձրարժեք և մինչև այսօր իր գիտական նշանակությունը պահպանած «Զկան թույնի բնության մասին» աշխատությունը:

В. М. АВАКЯН

ВЗГЛЯДЫ Д-РА МЕДИЦИНЫ М. И. АРУСТАМОВА О ПРИРОДЕ РЫБЬЕГО ЯДА

Д-р медицины М. И. Арустамов был одним из первых, если не первый в России, который точно установил токсико-инфекционный характер рыбьего отравления.

В бытность свою врачебным инспектором Астрахани (с 1889 г.) Арустамов, как хорошо подготовленный практический

врач, развернул широкую врачебную, общественную и научную деятельность.

В первый же год своей работы в Астрахани ему пришлось наблюдать ряд случаев отравления рыбой, из которых в пяти случаях исход был смертельный. Как вдумчивый врач, он тщательно наблюдает и изучает клиническую картину всех отравленных рыбой людей. Путем хорошо собранных анамнестических данных он устанавливает, что все случаи отравления произошли от употребления в пищу соленой рыбы в сыром виде. Все рыбы, вызвавшие указанные случаи отравлений, не имели никаких признаков разложения. Сопоставляя клиническую картину приведенных случаев отравления, возникших вследствие употребления в пищу по физическим качествам хорошей рыбы, с клинической картиной много раз наблюдавшихся им отравлений от употребления рыбы с явными признаками разложения, Арутамов отмечает очень большое различие как в течении болезни, так и в сроке инкубации и исходе заболевания. Он совершенно самостоятельно приходит к заключению о несовместимости этиологических причин двух различных групп отравлений, о возможности токсико-инфекционного характера наблюдавшихся им отравлений. Идея эта в то время была оригинальной и новой. Почти все авторы того периода подобные рыбные отравления объединяли в одну группу и объясняли их развитие наличием птоманинов в испорченной рыбе или некоторыми другими причинами. Арутамов подверг ревизии ошибочные взгляды многих авторитетных исследователей. Сделав вывод о возможности организованного яда в качестве этиологического фактора, он начинает кропотливую и трудную исследовательскую работу для установления природы рыбьего яда. Арутамов не ограничивается определением физических качеств рыб, вызвавших отравление; он производит их микроскопическое исследование, обнаруживает в различных частях тела рыб неизвестных ему микробов, делает разведки на питательных средах, изучает свойства полученных им колоний микробов, производит микроскопическое и бактериологическое исследование паренхиматозных органов трупов лиц, умерших от отравления, и приходит к выводу, что наблюдавшиеся им случаи отравления были вызваны четырьмя видами микробов.

Арустамов устанавливает также очень важный факт токсичности микробов, сохраняющейся после продолжительного кипячения. Результаты своих исследований Арустамов оформляет в работе «О природе рыбьего яда», которая в виде предварительного сообщения была им опубликована (журнал «Врач» № 19 за 1891 г.).

В течение всей своей последующей жизни Арустамов проводит большую и широкую научно-исследовательскую работу по выявлению микробы из рыбы, вызывающей отравления и из трупов людей, умерших от отравления рыбой. Он делает посевы, разводки, выделяет токсин, вырабатываемый этими микробами и проводит удачные экспериментальные работы на животных. Из наблюдавшихся им отравлений он выделяет 100 случаев, которые безусловно были вызваны бактериальной флорой. На основании своих долголетних наблюдений Арустамов приходит к выводу, что отравления дают в основном осетровые рыбы красной породы, на вид совершенно свежие и доброкачественные. Результатом подробного изучения этих 100 случаев отравлений является его высокоцененный монографический труд «О природе рыбьего отравления», который за смертью автора остался ненапечатанным.

Возбудитель ботулизма, как известно, был открыт в 1895 году ван-Эрменгемом. Эта анаэробная, токсигенная бацилла названа им *bacillus botulinus*. В настоящее время различают пять обособленных типов этой бациллы А, В, С, Д и Е. Уже в первой своей работе Арустамов, за 5 лет до опубликования работы ван-Эрменгема, высказал мысль, что имеются 4 типа бацилл рыбьего отравления. В настоящее время мы можем констатировать, что Арустамов несомненно при своих опытах имел дело с наличием ботулинуза в смешении с другими микробами. Недостаток его работы был лишь в том, что он не применял методы изоляции анаэробов и не дал четкой характеристики этих микробов.

Наконец Арустамов в указанном труде дал такое классическое описание клинической картины ботулизма, которое трудно встретить и в современной специальной литературе. Весь клинический симптомокомплекс отравления Арустамовым дан настолько полно и правильно, что, по мнению проф. Гло-

товой, и сейчас, через 60 лет после его описания по означенно-му труду можно изучать клиническую картину ботулизма.

Комиссия Министерства земледелия и государственных имуществ, рассматривавшая труды, представленные на объявленный конкурс за наилучшее сочинение о природе рыбных стравлений, вынесла 23 февраля 1904 г. следующее решение: «Выделенные автором (Арутамовым) микробы остались недостаточно точно охарактеризованными, по сохранившимся фотографиям и выцветшим препаратам трудно определить их действительную натуру, но возможно, что в руках доктора Арутамова были действительно виновники наблюдавшихся им случаев рыбных отравлений.

«Однако, если бактериологическая сторона работы д-ра Арутамова недостаточно точно обставлена, тем не менее ему принадлежит большая заслуга, что он изучил условия, при которых происходят отравления, собрал значительный клинический материал и установил ряд фактов, заставляющих выделить эти отравления в отдельную клиническую форму, стличную от заболеваний, обусловливаемых употреблением в пищу гнилой рыбы; наконец, он первый, если не считать опытов, сделанных в этом направлении д-ром Шмидтом, категорически высказался за инфекционный характер рыбных отравлений, приводя в подтверждение своего взгляда не мало убедительных фактов и соображений.

«Работа д-ра Арутамова выясняет в общих чертах природу рыбьего яда, указывает условия, при которых происходит отравление и дает его клиническую картину».

Из четырех представленных на конкурс и рассмотренных комиссией работ только труд Арутамова отвечал конкурсным условиям, за что комиссия присудила ему премию в 1500 рублей.

Д-р Маркар Иванович Арутамов был не только большим общественным деятелем, не только обаятельным человеком-врачом, но он обладал также пытливым умом, широким кругозором и отличался редким трудолюбием, наглядным свидетельством чего является его высокооцененный научный труд «О природе рыбьего яда».